ԱՐՄԵՆ ԲԵՋԱՆՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու

ԱՆՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՆԵՐԴԱՀՆԱԿ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում ներկայացված է անձի հոգեբանական անվտանգության նշանակությունը ապահով միջավայրի ձևավորման գործընթացում:Կյանքի և կեսագործունեության համար բարդ և վտանգավոր պայմաններում հոգեբանական անվտանգության խնդիրը ենթադրում է այնպիսի հոգեբանական մեթոդների և հնարքների կիրառում, որոնք վերոհիշյալ պայմաններում կապահովեն հոգեբանական պաշտպանվածություն, կյանքի որակի կայունություն և բարելավում:

Անդրադառնալով անձի հոգեբանական անվտանգությանը հոդվածում առաջ է քաշվում ենթադրություն, որ որքան համահունչ են փոխազդում միմյանց հետ անձի բաղադրիչները, այնքան ներդաշնակ է զգում իրեն անձը և այդքանով ապահովված է անձի հոգեբանական անվտանգությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ հոգեբանական անվտանգություն, անձի բաղադրիչ,սպառնալիք, վտանգ, հոգեբանական պաշտպանվածություն:

Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրը ուսումնասիրվում է գիտության տարբեր բնագավառներում՝ մասնագիտական գործունեություն, հանրային անվտանգություն, անձի հոգեբանություն, ընտանիքի հոգեբանություն և այլն: Կյանքի և կեսագործունեության համար բարդ և վտանգավոր պայմաններում հոգեբանական անվտանգության խնդիրը ենթադրում է այնպիսի հոգեբանական մեթոդների և հնարքների կիրառում, որոնք վերոհիշյալ պայմաններում կապահովեն հոգեբանական պաշտպանվածություն, կյանքի որակի կայունություն և բարելավում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է հանրության միջավայրում հուզական լարվածության խիստ մեծացմամբ, ինչը տեղի է ունենում աշխարհաքաղաքական, սոցիալտնտեսական, համամարդկային, ազգային և անձնային արժեքների սրընթաց փոփոխմամբ: Այս գործընթացում ներգրավված են մարդկային գործունեության գրեթե բոլոր բնագավառները՝ աշխատանքային, կրթական, առողջապահական, ընտանեկան:

Մարտահրավերները հաջորդում են մեկը մյուսին այնպիսի արագությամբ, որ երբեմն գրեթե անհնարին է լինում հարմարվել այդ փոփոխություններին: Մասնագիտական գրականության վերլուծություններն ու մեր կողմից կատարված հետաղոտությունները ցույց են տալիս, որ վերջին ժամանակներս ավելի հաճախակի են դարձել մարդկանց անպաշտպանվածության, անապահովության, անվստահության ու ավելորդության զգացումները:

Անձի հոգեկան համակարգում տեղի ունեցող այսպիսի փոփոխությունները միջնորդավորված արտահայտումներն են նրա հոգեկանի ենթակառույցների գործառութային տեղաշարժերի վերաբերյալ, որոնք դրսևորվում են համակարգության ՝ գործունեության արդյունավետության անկմամբ: Անձի հոգեբանական կառուցվածքի խնդիրը կարևոր տեղ

է զբաղեցնում անձի հոգեբանության տարբեր բնագավառների մասնագետների ուսումնասիրություններում: Շատ աշխատություններում (մանավանդ մանկավարժական) անձի կառուցվածքի բաղադրիչներից առանձնացնում են հետևյալ կարևորները՝ մոտիվացիոն, մտածական, գործունեական և «Ես» կառուցվածքի բաղադրիչները:

Առաջին բաղադրիչը (դրդապատճառայինը) անձի կառուցվածքում բնորոշում է անձի ուղղվածությունը որպես ընտրողական վերաբերմունք իրականությանը, ընդգրկելով պահանջմունքների և հետաքրքրությունների փոխազդող հատկությունների կուռ համակարգը: Այն դեպքում, երբ ուղղվածության բաղադրիչները գերակշռող են, դոմինանտ են և ունեն առաջատար նշանակություն, մյուսները (բաղադրիչները) ստանձնում են օգնող, աջակցող դերեր: Ուղղվածության դոմինանտ բաղադրիչները հանդիսանում են անձի հոգեկան գործունեության ակտիվությունը բնորոշող ենթակառուցվածքներ: Այսպես օրինակ՝ ճանաչողական պահանջմունքների գերակայությունը խթանում է հուզակամային գործընթացները, ինչն էլ ակտիվացնում է իտելեկտուալ գործունեությունը Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ակտիվացմամբ բնական պահանջմունքները մեղմանում են, ամենօրյա կենցաղային խնդիրները անցնում են երկրորդային պլան, անձը սկսում է հիմնավորել սեփական հետաքրքրությունների արդյունավետությունը տալով դրանց հանրային և անձնային կարևորություն/ ռացիոնալիզացիա:

Անձի կառուցվածքի երկրորդ՝ ինելեկտուալ բաղադրիչը որոշում է անձի հնարավորությունները և ներառում ընդունակությունների այն համակարգը, որոնք ապահովում են գործունեության արդյունավետությունը: Ընդունակությյունները փոխկապակցված են միմյանց հետ: Որպես կանոն, ընդունակությունների որոշ խումբ գերակայում են, մյուսները՝ ենթարկվում: Ընդունակությունների վրա անմիջական ազդեցություն է ունենում անձի ուղղվածությունը:

Որպես անձի կառուցվածքի երրորդ բաղադրիչ ընդուված է համարել բնավորությունը՝ հանրային միջավայրում մարդու վարքի դրսևորումը, անձի ոճը: Բնական է, որ բնավորությունը չի բնութագրում անհատին ամբողջովին, սակայն այն իրենից ներկայացնում է անձնային հատկությունների ՝ իտելեկտուալ, բարոյական, հուզակամային, տիպոլոգիական առանձնահատկությունների բարդ համակարգ, որոնք արտահայտվում են խառնվածքի միջոցով:

Բնավորության համակարգում կարելի է առանձնացնել գերակայող հատկությունները: Դրանցից են բարոյականությունը (հարաբերություններում նրբանկատությունը, ազնվությունը սեփական պարտավորությունների նկատմամբ, պատասխանատվությունը, համեստությունը), կամային հատկությունները (վճռականությունը, հաստակամությունը, ինքնատիրապետումը, արիականությունը), որոնք ապահովում են վարքի դրսևորման որոշակի ոճ և գործնական խնդիրների լուծման յարահատուկ մոտեցումներ: Այդ իսկ պատճառով կարելի ասել, որ բնավորության իրական հիմք են կազմում բարոյակամային հատկությունները: Վերջապես հաջորդ բաղադրիչը՝ «ԵՍ» կառույցը, ինչը կարելի համարել որպես հոգեկանի վերնակառույց, որը պասխանատու է անձի ինքնագիտակցության համար և իրականացնում է ինքնակառավարում՝ գործունեության ուժեղացում և թուլացում, վերահսկողություն, արարքների և գործողությունների կարգավորում, կյանքի և գործունեության կանխատեսում և պլանավորում:

Անդրադառնալով անձի հոգեբանական անվտանգությանը հարկ ենք համարում ենթադրել, որ որքան համահունչ են փոխազդում միմյանց հետ

անձի բաղադրիչները, այնքան ներդաշ-նակ է զգում իրեն անձը և նույնքանով ապահովված է նրա հոգեբանական ան-վտանգությունը:

Մարդկության զարգացման ամբողջ ճանապարհին մարդուն մշտապես շր-ջապատել և ուղեկցել են տարաբնույթ վտանգները, որոնք ժամանակի ըն-թացքում ոչ միայն չեն պակասել, այլև ավելացել են: Ժամանակակից գիտու-թյունները հերքեցին բացարձակ ան-վտանգության գաղափարը, մոտենալով «ընդունելի ռիսկայնություն» հասկացու-թյան գաղափարին: Կենսագործունեու-թյան ընթացքում բացարձակ անվտան-գություն չի կարող լինել, միշտ առկա է հնարավոր վտանգը: Սակայն ռիսկը /հնարավոր վտանգը/ կարող է լինել ոչ միայն ընդունելի, սահմանամերձ, այլև արտագարգ, որը վտանգավոր է օբյեկ-տի կայուն կենսագործունեության և զարգացման համար:

Ռիսկը՝ համակարգի հետ առնչվելու, դրանում մուտք գործելու գերակայող ցանկության այնպիսի վիճակն է, որ-տեղ ի սկզբանե հնարավոր չէ ապա-հովել, կանխատեսել ինչպես երևույ-թի հավանական փոփոխությունների, այնպես էլ անձի հոգեֆիզիոլոգիական համակարգերի գործառնական հնարա-վորությունների, դրանց հավանական փոփոխությունների հստակ բնութագ-րերը, վերջնական արդյունքները:[1].

Ռիսկ, կամ հնարավոր վտանգ հաս-կացության դասական ըմբռնումը ամբի-վալենտ է, հավանական սպառնալիքը, վտանգը հոգեկան կոնկրետ համա-կարգության կողմից նախատրամադր-ված ընտրությունն է հնարավորության և սպառնալիքի միջև որը դիտարկվում է որպես մարդու համար ապակառու-ցողական հակադիր ուժերի (գործոն-ների) ազդեցություն[4]: Վտանգները կրում են առօրեական բնույթ, և դրանց ազդեցությունը իրականանում է որո-շակի պայմաններում: Գիտակցության առանձնահատկութնուններից է այն, որ վտանգավոր իրավիճակին հաճախ չի տրվում գերակա նշանակություն, քանի որ այն կրում է հավանական բնույթ:

Գրականության ուսումնասիրությու-նը հնարավորություն է տալիս պնդել, որմարդու վարքային դրսևորումները հիմնված են անվտանգության մասին մի ամբողջ պատկերացումների համա-կարգի վրա: Այս տեսանկյունից՝կարևոր է Ֆ.Կ. Մուգուլովի այն գաղափարը,որ «Անվտանգության ընդհանուր բնորո-շումը կարելի է որոշել որպես օբյեկտի կայուն պաշտպանված վիճակ՝ տարբեր տիպի սպառնալիքներից ու վտանգնե-րից, որոնց ազդեցությունը կարող է բա-ցասական ազդեցություն ունենալ օբյեկ-տի կառուցվածքային և գործառութային ամբողջությանը, հասցնելով վերջնա-կան քայքայման կամ անվերահսկելի փոխակերպման այլ որակի օբյեկտի:ե [3].Ա.Լ. Ռոմանովիչը գտնում է, որ ան-վտանգությունը օբյեկտի (երևույթի, գործընթացի) «ունակությունն» է պահ-պանել իր համակարգակարուցողական հատկություններն ու հիմնական բնու-թագրերը արտաքին և ներքին վնասա-կար քայքայիչ ազդակներից [5]:

Վերլուծելով գիտական գրականու-թյունը կարելի է եզրահանգել, որ ան-վտանգությունը որպեսն գիտական կա-տեգորիա օբյեկտի նկատմամբ դիտվում է որպես՝

Օբյեկտի և նրա կենսագործունեու-թյան (ակտուալ և իրադրային) որոշակի վիճակ:

Օբյեկտի հետաքրքրությունների պաշտպանվածության մակարդակ:

Համակարգի բավարար հնարավո-րություններ սպառնալիքների և վտանգ-ների կանխարգելման և հաղթահարման համար

Օբյեկտի անվտանգ ու կայուն զար-գացման որակական բնութագիր, նե-րառելով անհատի կայուն անձնային կառույցները:

Անհրաժեշտ է ընդունել, որ Անվտան-գության վիճակը միշտ սուբյեկտիվ է,

Տարբեր մարդկանց կողմից նույն իրավիճակը վերապրվում է յուրովի: Հաճախ պաշտպանվածության կորուստը, որը հանգեցնում է ամբողջականության խախտմանը, անկայունությանը, չի նշանակում համակարգի քայքայում: Որոշակի հանգամանքներում այն կարող է նպաստել զարգացման գործընթացին, բնութագրերի որակական փոփոխմանը, նոր պայմանների սեղծմանն ու միջավայրի հետ փոխազդմանը և հետևաբար՝ անվտանգության ձևավորմանը [2]:

Անձի հոգեբանական անվտանգության խնդիրը բազմավոդնդակ է և բազմաբնույթ: Այս խնդրի վերաբերյալ ցանկացած քննարկում, ցանկացած ուղղություններով ենթադրում է անձի հարաբերությբնների ուսումնասիրում շրջակա միջավայրի հետ, փոխներգործող կապերի հետազոտություն միջավայրի փոփխականների և անձի հոգեբանական բնութագրիչների միջև, կարողությունների առկայություն տարբեր սպառնալիքների հանդեպ պատրաստակամ լինելու, համապատասխան միջոցներ հայթհայթելու և վտանգին դիմակայելու համար:

Հոգեբանական անվտանգությունը հիմնված է սեփական զգացողությունների վրա, ուղղված լինելով դեպի հոգեկան առողջության պահպանմանը: Անվտանգության սպառնալիքների աղբյուր են հանդիսանում հենց անձի հոգեկանի առանձնահատկություններ, հոգեբանական բնութագրերը:

Հոգեբանական անվտանգությունը կարելի է դիտարկել որպես անձի կողմից ռեալ իրականության սուբյեկտիվ ընկալումը իր հնարավորությունների և պահանջմունքների համադրության (հակադրության) արդյունքի համատեքստում:

Օբյեկտի կայուն կենսագործունեության համար անհրաժեշտ պայման է անձի անվտանգությունը: Այն ապահովում է ֆունկցիոնալ հարմամարավետություն, արտակարգ գործոնների բացասական ազդեցության չեզոքացում, պահանջմունքաշարժառիթային մեխանիզմների կայունություն, սոցիալական հարաբերությունների կարգավորում, հոգեֆիզիոլոգիական գործընթացների կանոնավորում: [6].

Պատրաստել մարդուն գործելու վտանգավոր իրադրություններում՝ կնշանակի ստեղծել պայմաններ նրա համար յուրացնելու ոչ միայն համապատասխան վարքային մոդելներ, ալև մշակել, ձևավորել ու զարգացնել համապատասխան անձնային հատկություններ ու որակներ, որոնք կօգնեն նրան իրացնել այդ վարքային դրսևորումները:

Ըստ էության հոգեկան առողջության միջուկը անձնային հատկությունների համակարգն է: Այն ժառանգականության, դաստարակության ու ինքնազարգացմանը միտված գիտակցված գործունեության արդյունք է:

Տվյալ խնդիրը հետազոտող մասնագետները պնդում են, որ միայն անվտանգության պահանջմունքի բավարարումից հետո է հնարավոր ապահովել անձի զարգացման մղումները: Անապահով միջավարում անձի մոտ ձևավորվում եմ պաշտպանական մեխանիզմներ՝ ծնելով դիմադրություն, որն էլ կարող է լինել արտաքին և ներքին: Արտաքին. երբ խաթարվում են ընդհանուր ընդուված նորմերն ու կանոնները՝ առաջացնելով անհնազանդության, տարբեր վարքյին դրսևորումներ, ագրեսիա և այլն: Ներքին՝ երբ առկա է հեռացում միջանձնային շփումներից, ինքնաքննադատություն, ինքնախարազանում, աուտոագրեսիա, բացասական վերաբերմունք ինքն իր նկատմամբ: Այս հակադրությունն ու դիմադրությունը խաթարում է միջանձնային հարաբերությունները՝ քայքայելով մասնակից անձանց հոգեկան անդորրը:

Երկարատև հուզական լարվածությունը, հոգեբանական անպաշտպանվածության վերապրումը դրդում է

անհատին ապակառուցողական ելքի հոգետրավմատիկ իրավիճակից՝ մղելով նրան այնպիսի դիրքորոշումների, որոնք անձի ենթակառույցների յուրահատուկ փոփոխությունների արդյունք է(«Ես կյոնցեպցիայի» քայքայում, անարդյունավետ, երբեմն էլ վտանգավոր վարք և գործունեություն, մտածական գործընթացների դանդաղում և այլն):

Անվտանգ պայմանների ստեղծման արդյունքնում անհատի կողմից կարևորվում են իր հնարավորությունները, կայունանում հանդուրժողականությունը կյանքի դժվարին պայմանների, կոնֆլիկտների նկատմամբ:

Հոգեբանորեն պաշտպանված անձը գիտի վտանգների տարբեր աղբյուրների մասին, սակայն համոզված է, որ միշտ առկա են նախադրյալներ վտանգավոր իրավիճակների կանխարգելման և հաղահարման համար:

Ազդակը, որը առաջացնում է հոգեբանական անվտանգության օպտիմալ մակարդակի խաթարում՝ առաջացնում է բացասական հոգեբանական ապրումներ, ձևավորելով կամ ակտիվ հակազդում՝ պայքար սպառնալիքի աղբյուրի դեմ (լարվածություն, կատաղություն և այլն), կամ պասսիվ դրսևորում՝ ընկճվախություն, մեղքի զգացում, երգչոտություն: Երկարատև սթրեսային ծանաբեռնվածությունը, սպառնալիքի սպասումը ի վերջո առաջացնում է նյարդային համակարգի հյուծվածություն՝ առաջացնելով սոմատիկ և ֆունկցիոնալ խանգարումներ ու հիվանդություններ:

Հոգեբանական անվտանգության խնդրից զուրկ չէ նաև կրթական բնագավառը: Ուստի կարևոր ենք համարում ոչ միայն ուսումնասիրել գիտական գրականություն վերաբերող կրթական համակարգում աշակերտների և ուսանողների (այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերների) հոգեբանական անվտանգությանը, այլև իրականացնել հետազոտություն այս բնագավառում՝ մշակելու, վեր հանելու անհրաժեշտ պայմաններն ու հոգեկան անվտանգության բաղադրչները, որոնք բնորոշ են մեր իրականությանը:

Գրականություն

1. Краснянская Т.М. Безопасность человека: психологический аспект: учебное пособие / под ред. А.В. Непомнящего. Ставрополь: ЗАО Пресса, 2005.стр 10
2. Краснянская Т.М. Безопасность человека: психологический аспект: учебное пособие / под ред. А.В. Непомнящего. Ставрополь: ЗАО Пресса, 2005. 216]:
3. Мугулов Ф.К. Безопасность личности: теоретические и прикладные аспекты социологического анализа: монография. Сочи: РИО СИМБиП, 2003. 14, с. 45].
4. Никитин С.М., Феофанов К.А. Социологическая теория риска в поисках предмета // Социалогические исследования. 1992. № 10. С.120- 127.
5. Романович А.Л. Развитие и безопасность социоприродных систем: философско-методологический анализ: дис ... д-ра. филос. наук М: РГБ. 418 с. URL: http//dis/rsl.ru/diss/03/1081/031081008.pdf (Дата обращения: 20.06.2007).
6. Шлыкова Н.Л. Психологическая безопасность субъекта профессиональной деятельности. Тверь: ООО Триада, 2004.. 12 с, 151 с.].

ГАРМОНИЧНОЕ ВЗАИМОДЕЙСТВИЕ СОСТАВНЫХ СТРУКТУРЫ ЛИЧНОСТИ И ПСИХОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

АРМЕН БЕДЖАНЯН

Преподаватель кафедры теории и истории психологии Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна, кандидат психологических наук

Статья посвящена определению места экстремальных ситуаций в общей системе исследований по психологическим аспектам безопасности.

Проведен психологический анализ экстремальной ситуации, ее воздействия на психику и поведение человека. Безопасность рассматривается как ключевое понятие в социальной и научной оценке обсуждаемой проблемы. Психология безопасности рассмотрена как системная область психологического знания, в которую как один из разделов входит психология экстремальной ситуации.

HARMONIOUS INTERACTION OF HUMAN BODY PARTS AND PERSONALITY'S PSYCHOLOGICAL SAFETY

ARMEN BEJANYAN

Lecturer of the Chair of Theory and History of Psychology, ASPU, PhD in Psychology

The article seeks to identify the place of extreme situations in the general system of investigations on psychological aspects of security. A psychological analysis of the extreme situation, its influence on mentality and people behavior is given. The security is regarded as the key conception in social and scientific evaluation of the problem. Security psychology is regarded as a systematized field of psychological knowledge the component of which is considered psychology of extreme situations.